

Մրցույթի հայտարարություն

«Սյունիքի մարզի «Հացավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

«ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 6-րդ և 7-րդ կետերի համաձայն» «Սյունիքի մարզի «Հացավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Սյունիքի մարզի «Հացավանի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ում

2021 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 18-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին, «Սյունիքի մարզի «Հացավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, Հացավան բնակավայր, փողոց 2, շենք 12/1:

Տեղեկությունների համար դիմել՝ 093 94 23 99 հեռախոսահամարով, էլ՝ փոստ՝ hatsavan@schools.am: